ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«04» Հոկտեմբերի 2024թ. No 8/1-Գ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«Գարանտ 24» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ

Գնման ընթացակարգի ծածկագիր՝ **ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-24/012**

Մասնակից ՝ **«Գարանտ 24» ՍՊԸ**

/ՀՎՀՀ՝ 02910767, գործունեության հասցե՝ ք. Երևան, Երևան, Նալբանդյան Փ., շ. 25/14, 76/

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար հակավիրուսային համակարգչային ծրագրային փաթեթների ձեռքբերման նպատակով 12.09.2023թ. հայտարարվել է ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-24/012 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգը, որին հայտ է ներկայացրել և համակարգի կողմից առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Գարանտ 24» ՍՊԸ-ն: Վերջինիս կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանել ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-24/012 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերին բացարձակապես, դիմում-հայտարարության մեջ ներկայացված է եղել այլ երկրի ռեզիդենտի մասին տեղեկություն, փաստաթղթերի ստորագրությունները և իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը բացակայել է: Գնահատող հանձնաժողովը 25.09.2024թ.-ին կայացած նիստում «Գարանտ 24» ՍՊԸ-ին առաջարկել է շտկել ներկայացված փաստաթղթերը մեկ աշխատանքային օրվա ընթացքում, և մասնակիցը սահմանված ժամկետում շտկել է փաստաթղթերը:

27.09.2024թ. թիվ 3 որոշմամբ գնահատող հանձնաժողովի անդամների կողմից իրականացրած գնահատման արդյունքում հանձանաժողովը որոշել է գնահատել բավարար «Գարանտ 24» ՍՊԸ-ին և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել և նրա հետ կնքել պայմանագիր «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պայմանով:

16.10.2024թ. ընտրված մասնակցին ուղարկվել է ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-24/012-1 ծածկագրով պայմանագրի նախագիծը, սակայն «Գարանտ 24» ՍՊԸ-ն «Գնումների մասին» ՀՀ օրենքի

36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված ժամկետում չի ներկայացրել իր կողմից հաստատված ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-24/012-1 ծածկագրով պայմանագիրը, ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովումները:

24.10.2024թ. թիվ 4 որոշմամբ գնահատող հանձնաժողովի անդամների կողմից իրականացրած գնահատման արդյունքում հանձանաժողովը որոշել է զրկել «Գարանտ 24» ՍՊԸ-ին պայմանագիրը կնքելու իրավունքից և ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-24/012 ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն:

1. Եզրահանգում

Վերոնշյալ կարգավորումների համատեքստում անդրադառնալով առկա փաստական հանգամանքներին՝ պետք է արձանագրել, որ ի հակադրություն հրավերի պահանջներին՝ որպես գնման գործընթացի մասնակից հանդես եկած «Գարանտ 24» ՍՊԸ-ն՝ չներկայացնելով պայմանագիրը, պայմանագրի և որակավորման ապահովումները, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին «Գարանտ 24» ՍՊԸ-ի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, այն է՝ Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա, որոշում եմ **«Գարանտ 24» ՍՊԸ-ին** ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

11/4/2024

X

ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Signed by: GEVORGYAN EDGAR 4010690054 ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ